Հ. ՏԵԼԵՔՅԱՆ — Հայաստանի պարբերական մամուլը սոցիալիզմի կառուցման պայքարում

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1970, 558 էջ

Մեր հանրապետության մամուլի վերաբերյալ շատ քիչ ուսումնասիրություններ կան, եղածներն էլ նվիրված են միայն նրա պատմության այս կամ այն նեղ, մասնավոր շրջանի, կամ առանձին պարբերականների. մինչդեռ պրոբլեմատիկ բնույթի հետազոտությունները բացակայում են։ Այս առումով էլ գիտական ուշագրավ նորություն է Հ. Տելեքյանի «Հայաստանի պարբերական մամուլը սոցիալիզմի կառուցման պայքարում» մենագրությունը, որն աչքի է ընկնում ինչպես ընդգրկման համակողմանիությամբ, այնպես էլ հետազոտության քննական-վերլուծական բնույթով։

Հեղինակն իր աշխատության մեջ վերլուծել է պարբերական մամուլի գործունեությունը սոցիալիզմի կառուցման առանձին փուլերում և պայքարի ու աշխատանքի հիմնական բնագավառներում։

Մյուս կողմից՝ խուսափելով նկարագրական-վերապատմողական գրելաձևից, նա, իր առջև դրված պրոբլեմներին համապատասխան՝ անդրադարձել է ավելի քան մեկուկես տասնամյակի ընթացքում (1920—1936 թթ.) Սովետական Հայաստանում հրատարակված մոտ 300 անուն թերթերի, ամսագրերի, հանդեսների և այլ պարբերականների հիմնական նյութին, որը յուրովի ներկայացնում է կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանում հանրապետության աշխատավորների կյանքի ու պայքարի հարուստ պատմությունը։

Ըստ որում, դա արված է մամուլի դերի բացահայտման տեսանկյունից, առավել բնորոշ ու ցայտուն փաստարկումների ընդգծումով՝ առաջին անգամ շրջանառության մեջ դնելով մեծամասամբ մինչև այժմ չօգտագործված նյութեր։ Դա ավելի նպատակասլաց է դարձրել մենագրության պրոբլեմատիկան, առավել ակնառու այն սեռուն հետևողականությունը, որ հանդես է բերել պարբերական մամուլը սոցիալիզմի կառուցման յուրաքանչյուր կոնկրետ փուլում՝ կոմունիստական կուսակցության առաջադրած տնտեսական և քաղաքական կարևորագույն խնդիրների իրականացմանը նպաստելու իր խնդիրները կատարելիս։

Քննարկվող աշխատության հոդածին մասը, որ նվիրված է ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում մեր հանրապետության պարբերական մամուլին, բաժանված է երեք գլուխների՝ ա) պայքար հանուն սովետական իշխանության ամրապնդման և աշխատավորների ինտերնացիոնալ համախմբման. բ) տնտեսական շինարարության խնդիրների արծարծում. գ) մամուլի կազմակերպական ամրապնդում և մասսայական աշխատանքի ուժեղացում։

Հեղինակի ուշադրությունն զբաղեցրել են մամուլի դերի ցուցադրման առումով հատկանշական այնպիսի իրողություններ, ինչպիսիք են՝ քաղաքական ասպարեզում՝ դաշնակցության փետրվարյան հակահեղափոխության մերկացումն ու քննադատությունը, Անդրֆեդերացիայի և ՍՍՀՄ ստեղծման նշանակության պրոպագանդան, Խորհրդային Ռուսաստանի օգնության գնահատումը, ազգային փոքրամասնությունների շրջանում տարվող աշխատանքների լուսաբանումը, պայքարը տրոցկիստական օպոզիցիայի դեմ՝ հանուն կուսակցության լենինյան միասնության ամրապնդման. տնտեսական խնդիրների առնչությամբ՝ պայքարը նոր տնտեսական քաղաքականության ճիշտ կիրառման համար՝ ընդդեմ մանրբուրժուական տարերքի, գյուղատնտեսության և արդյունաբերության վերականգնման, արհեստակցական շարժման ծավալման հետ կապված հարցերի գործարար քննարկումը։

Մամուլի ընդհանուր դերի արժեքավորմանը զուգընթաց՝ մենագրության այս մասում բնութագրված են այդ ժամանակաշրջանում Հայաստանում լույս տեսած ինչպես կուսակցական, կոմերիտական, գյուղացիական, գյուղատնտեսական, կոոպերատիվ, արհմիութենական պարբերականները, այնպես էլ գավառային, զինվորական, մանկա-պատանեական, ազգային փոքրամասնությունների լեզուներով հրատարակված մամուլը։

Հեղինակը հիշատակում է նաև թերթերի ու հանդեսների խմբագիրներին, խմբագրական կոլեգիաների անդամներին, ակտիվ աշխատակիցներին, հաղորդում է բիբլիոգրաֆիական մանրամասն տեղեկություններ, արծարծում է հրապարակախոսության և ժուռնալիստական վարպետության հետ առնչվող մի շարք հարցեր։ Այս մոտեցումը նա կիրառում է մենագրության մյուս մասերում նույնպես, որի շնորհիվ սոցիալիզմի կառուցման պայքարում պարբերական մամուլի դերի բազմակողմանի բացահայտումը գրքում սերտորեն միահյուսված է նրա բուն պատմության գիտական շարադրման հետ։

Այդպիսի զուգորդումով հեղինակը կարողացել է ոչ միայն նպատակասլաց դարձնել թեմայի հետազոտությունը, այլև համակողմանիորեն ներկայացնել սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանում մեր հանրապետության պարբերական մամուլի անցած ուղին, առավել ճշտությամբ որոշել նրա տեղն ու դերը հասարակական-քաղաքական կյանքում, տնտեսության արմատական վերափոխումների համար աշխատավորության գործադրած ջանքերի մեջ։

Այս նույն սկզբունքով մենագրության երկրորդ մասում քննարկված են երեք հիմնական պրոբլեմներ, որոնցից յուրաքանչյուրին հատկացված է առանձին գլուխ։ Առաջինը նվիրված է պարբերական մամուլի դերի բացահայտմանը սոցիալիստական ինդուստրացման համար մղված պայքարում։ Այստեղ արծարծված հարցերից կարևորագույններն են՝ սոցիալիստական ինդուստրացման ուղիների ու մեթոդների պարզաբանումն ու պրոպագանդումը մամուլում. պայքարը հակակուսակցական օպոզիցիաների ու դաշնակցության գաղափարախոսության դեմ. խնայողության ռեժիմի կիրառումը և անհաշտ կռիվը բյուրոկրատիզմի դեմ. առաջին հնգամյա պլանի պրոպագանդումն ու սոցիալիստական մրցության ծավալումը. ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցումն ու կադրերի պատրաստումը. առաջին հնգամյակի կատարման արդյունքների ամփոփումն ու գնահատումը։

Գյուղի սոցիալիստական վերակառուցման խնդիրների քննարկում հանրապետության մամուլում, աջ թեքման քննադատություն և պայքար կուլակության դեմ, գյուղի կուսակցական ակտիվի համախմբում, բատրակների մեջ տարվող աշխատանքի ընդլայնում ու խորացում, պայքար կուսակցության գծից կատարված շեղումների դեմ՝ հանուն կոլտնտեսությունների և սովխոզների կազմակերպական ու նյութական ամրապնդման,— ահա այն հիմնական հարցերը, որ երկրորդ գլխում զբաղեցրել են հեղինակին պարբերական մամուլի գործունեության այս բնագավառը վերլուծելիս։

Մենագրության ինչպես այս, այնպես էլ մյուս բաժիններում հեղինակը ցուցաբերել է քննական մոտեցում, մամուլի կատարած դրական իրոք նշանակալից դերը բացահայտելուն զուգընթաց՝ չանտեսելով նաև նրա գործունեության մեջ տեղ գտած առանձին վրիպումները, այս կամ այն պարբերականի թույլ տված սխալները, մամուլի էջերում արտահայտված ոչ ճիշտ հարցադրումները։ Եվ այսպիսի քննական վերաբերմունքի շնորհիվ հեղինակը կարողացել է ոչ միայն խուսափել «միակողմանիության արատից», այլև վերարտադրել պայքարի ու առաջընթացի կենդանի պրոցեսը՝ պարբերական մամուլին մոտենալով ոչ թե իբրև սոսկ նյութեր ու տվյալներ մատակարարող մի շտեմարանի, այլ այն դիտելով որպես հայրենիքի ու ժողովրդի սոցիալիստական վերածննդի հավաստի տարեգրություն, որն արտացոլել ու սերունդներին է ավանդել նոր կյանքի կառուցման դժվարին, բայց և հերոսական մաքառումների համայնապատկերը։

Ինդուստրացման և կոլեկտիվացման խնդիրների քննարկումից հետո հեղինակն անդրադառնում է ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցումն ավարտելու համար մեր հանրապետության պարբերական մամուլի պայքարին, վերլուծում է թերթերի ու հանդեսների աշխատանքը երկրորդ հնգամյա պլանի կենսագործման, հարվածային ու ստախանովյան շարժումը կազմակերպելու, սոցիալիզմի կառուցման հիմնական արդյունքները պրոպագանդելու, այդ պատմական նվաճման միջազգային նշանակությունը պարզաբանելու ուղղությամբ։

Աշխատության այս բաժնում արժեքավորված են նաև կուսակցական, գյուղացիական, քաղաքային նորաստեղծ պարբերականները, տեխնիկայի տիրապետման հարցերին նվիրված առանձին հրատարակություններ, շրջանային մամուլը, ՄՏ կայանների և սովխոզների քաղաքաժինների թերթերը։

Մենագրության երրորդ մասը ամբողջովին նվիրված է կուլտուրական հեղափոխության պրոբլեմների քննարկմանը Հայաստանի պարբերական մամուլում։ Անդրադառնալով կուլտուրական շինարարության հիմնական բնագավառներին (ժողովրդական կրթություն, կուլտուրլուսավորական աշխատանք, նոր մարդու հասարակական-բարոյական կերպարի ձևավորում, սոցիալիստական հայ գրականության, արվեստի ու գիտության սկզբնավորում ու զարգացում), հեղինակը բնութագրում-արժեքավորում է մանկավարժական, բժշկական, սպորտային, հակա-

կրոնական, դրական-գեղարվեստական, գեղագիտական և այլ բնույթի պարբերականները։ Աշխատության այս բաժնում ևս ընդհանրացումները կատարված են փաստական նյութի մանրամասն ու համակողմանի վերլուծության հիման վրա։

Այսպիսով, Հ. Ֆելեքյանի մենագրությունը մեր հանրապետությունում սոցիալիզմի կառուցման պատմությունն է՝ շարադրված պարբերական մամուլի դերի և բազմակողմանի գործունեության բացահայտման տեսանկյունով։ Սա էլ հենց հեղինակի հետազոտության գիտական կարևոր արժանիքն է և այն նորությունը, որ բերում է նա պրոբլեմի ուսումնասիրության մեջ։ Դրանով առավել ամբողջական է դառնում Սովետական Հայաստանի այդ ժամանակաշրջանի պատմության լուսաբանումը։ Հանրապետության կուսակցական կազմակերպությունների դերի նկարագրությունը և քաղաքացիական պատմության գիտական շարադրումը, որ կատարել են նախորդ ուսումնասիրողները, այս աշխատության շնորհիվ համալրվում է նաև պարբերական մամուլի գործունեության հանգամանալից ցուցադրմամբ։

Հեղինակը Հայաստանում հրատարակված թերթերի ու հանդեսների գործունեությունը ներկայացնում է ինչպես համամիութենական, այնպես էլ, մասնավորապես, անդրկովկասյան պարբերական մամուլի պատմության ֆոնի վրա։ Գրքում օգտագործված են մեր հանրապետությունում նոր տիպի մամուլի սկզբնավորման ու զարգացման ընթացքը հատկանշող արխիվային հարուստ նյութերը, որոնք գիտական շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ։

Ելնելով պարբերական մամուլին առաջադրված նոր խնդիրների լենինյան ըմբռնումից, հեղինակն անդրադարձել է դաղափարական-դաստիարակչական ու կազմակերպական այն բուռն աշխատանքին, որի շնորհիվ մամուլը դարձավ հասարակական ներգործության կարևոր լծակներից մեկը՝ սոցիալիզմի կառուցման պայքարում։ Քննարկվող աշխատությունը գիտական արժեքավոր ուսումնասիրություն է։

Գրքում տեղ են գտել առանձին թերություններ ու անճշտություններ։ Թվում է, երկրորդ մասի երրորդ գլուխը (էջ 375—398) հարկ էր ավելի հանգամանորեն շարադրել։ Անհրաժեշտ էր ավելի բազմակողմանի վերլուծել նաև հողային ռեֆորմի իրականացման հարցերը։ Գրքի 394-րդ էջում նշված է, թե երկրորդ հնգամյակի վերջում Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ ծանր արդյունաբերության տեսակարար կշիռը կազմեց 84 տոկոս։ Դա պարզապես վրիպում է. այդ թիվը վերաբերում է ոչ թե ամբողջ ժողովրդական տնտեսության, այլ միայն արդյունաբերական արտադրանքի մեջ ծանր արդյունաբերության ունեցած տեսակարար կշռին։ Նշված և այլ նմանօրինակ բացերը, որ կրում են մասնակի բնույթ, ամենևին չեն նսեմացնում գրքի արժանիքները։

Հ. Ֆելեքյանի «Հայաստանի պարբերական մամուլը սոցիալիզմի կառուցման պայքարում» մենագրությունը արժեքավոր ներդրում է սովետահայ պարբերական մամուլի պատմության ուսումնասիրության մեջ։

Վ. ՂԱԶԱԽԵՑՅԱՆ